**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/6048-2021

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-847-22.01.2021-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի փետրվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 115 - Ա որոշումը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան

Հեռ. 515685

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-847-22.01.2021-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ դարձնելու համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպումը և կառավարումը՝ պատասխանատու լիազոր մարմիններին հստակ սահմանելու միջոցով:

Նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները (բացառությամբ Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների) գտնվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ պետական ճանապարհային մարմնի) տնօրինության և կառավարման ներքո:…()

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն նախագծային աշխատանքներ կատարող կազմակերպությունները և անձինք ավտոմոբիլային ճանապարհների և ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի, դրանց հետ կապված աշխատանքների՝ սահմանված կարգով կազմված նախագծերը համաձայնեցնում են պետական ճանապարհային մարմնի հետ: Համաձայնեցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 265-Ն որոշման 3-րդ կետի համաձայն սահմանվել են Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական ճանապարհային մարմինները:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն իրավասու մարմինները, կազմակերպությունները և անձինք ոստիկանության համաձայնությամբ կարող են իրականացնել անմիջապես ճանապարհի վրա և դրա մոտ՝ դեպի ճանապարհ մուտք և ելք ունեցող կրպակների, գովազդային վահանակների և այլնի տեղադրումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն համապատասխան պաշտոնատար անձինք ոստիկանության և այլ իրավասու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցնում են ճանապարհային երթևեկության կազմակերպման և տեխնիկական միջոցների տեղադրման նախագծերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն համապատասխան պաշտոնատար անձինք ոստիկանության և այլ իրավասու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցնում են նաև ճանապարհի և դրա ինժեներական կառույցների շինարարության, վերակառուցման և վերանորոգման նախագծերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 1644-Ն որոշման 1-ին կետով հաստատվել է ճանապարհների և դրանց ինժեներական կառույցների նախագծման, կառուցման, վերակառուցման, վերանորոգման ու պահպանման, ինչպես նաև ճանապարհամերձ օբյեկտների տեղաբաշխման ժամանակ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և ճանապարհային աշխատանքների կատարման ժամանակ երթևեկության կազմակերպման սխեմաները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ համաձայնեցնելու կարգը, որի 4-րդ կետի համաձայն համաձայնեցման համար Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ուսումնասիրվում են նախագծերն ու սխեմաները, տեղերում կատարվում են հետազոտություններ, որոնց արդյունքների մասին կազմվում է եզրակացություն:

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ թե՛ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» և, թե՛ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքներով հստակ նշված են այն լիազոր,

պատասխանատու մարմինները, որոնց հետ պետք է համաձայնեցվեն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետում նշված սխեմաները (նախագծերը):

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ «լիազոր մարմին» տերմինը վերոնշյալ հիմնավորումների նույն տրամաբանությամբ կիրառվում է այլ օրենքներում, այդ թվում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում, ինչով պայմանավորված նպատակահարմար չենք համարում սույն հոդվածում պատասխանատու մարմնի լրիվ անվանման ամրագրումը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ նախագծի շարադրմամբ ստացվում է, որ տրանսպորտի բնագավառի լիազոր մարմնի հետ համայնքի ղեկավարը պետք է համաձայնեցնի համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով): Այնինչ, տրանսպորտի բնագավառի լիազոր մարմնի հետ պետք է համաձայնեցվի համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի մի մասը, այն է՝ բացառապես համայնքի միջով անցնող Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող հատվածը:

Հիմք ընդունելով նշված դիտարկումները՝ առաջարկում ենք օրենքի նախագծով քննարկվող հոդվածը թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 115 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-847-22.01.2021-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-847-22.01.2021-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին » 2002 թվականի մայիսի 7-ի

ՀՕ-337-Ն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը շարադրել նոր բովանդակությամբ.

«19) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում եւ տրանսպորտի բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքում ճանապարհային երթեւեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) եւ կայացնում որոշումներ ՝ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթեւեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթեւեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթեւեկության անվտանգության մասով համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««« ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ » ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը եւ առկա իրավիճակը.

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման ընթացքում առաջանում են անորոշ իրավիճակներ, որոնց գոյությունը անհրաժեշտություն է առաջացրել ներկայացնելու վերոնշյալ օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծը:

Նախագծով առաջարկվող փոփոխության ընդունումը բխում է համայնքում ճանապարհային երթեւեկության ոլորտին վերաբերող խնդիրների լուծման եւ դրա համար պատասխանատու լիազոր մարմնի հստակ սահմանման անհրաժեշտությունից:

Սույն նախագծի հիմնավորվածությունը ի թիվս այլի պայմանավորված է նաեւ ճանապարհային երթեւեկության նշանների առկայության, բացակայության, տեղափոխման, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրանց ժամանակավոր տեղափոխման պատճառների մասին տեղեկատվություն ստանալու հնարավորության բացակայության պարագայում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով սահմանված, տրանսպորտի բնագավառում համայնքի ղեկավարի լիազորությունների պատշաճ կատարելու հնարավորության ստեղծման հետ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ոստիկանության «ճանապարհային ոստիկանության» ծառայություն կողմից տրամադրված տեղեկատվության 2019 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2020 թվականի մարտի 5-ը ներառյալ Հայաստանի Հանրապետությունում պետական վիճակագրական հաշվառման է վերցվել զոհերով եւ վիրավորներով 5481 ճանապարհատրանսպորտային պատահար (այսուհետ ՃՏՊ), որի հետեւանքով զոհվել է 386, մարմնական վնասվածքներ ստացել՝ 7827 մարդ:

2019 թվականի ընթացքում արձանագրվել է միայն նյութական վնասով 42.344 ՃՏՊ:

Սույն վիճակագրական տվյալները վերաբերում են ամբողջ երկրում գրանցված ճանապարհատրանսպորտային պատահարներին:

Հաշվի առնելով Երեւան համայնքում ճանապարհային երթեւեկությունը ապահովող ճանապարհային նշանների համալրվածության հարաբերականորեն բավարար մակարդակը՝ հարկ է նշել, որ ի տարբերություն Երեւանի, հեռավոր համայնքներում վերոնշյալ ոլորտի տիրում է տրամագծորեն հակառակ իրավիճակ:

Համայնքներում առկա է վերոնշյալ ոլորտի ընդհանուր կառավարման եւ վերահսկման խնդիր՝ պայմանավորված ճանապարհային երթեվեկության անվտանգության ապահովման համար անհրաժեշտ կահավորանքով դրանք հագեցնելու եւ ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառների (եթե դրանք հետեւանք են ճանապարհային երթեվեկության անվտանգության ոչ պատշաճ ապահովման կամ պատասխանատվության ենթարկված անձի կողմից խախտման) վերհանման հետ:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2009 թվականի մարտի 12-ի N 256-Ն որոշմամբ սահմանվել է Հայաստանի Հանրապետության բնակավայրերի տարածքով անցնող միջպետական, հանրապետական եւ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհների ցանկը, սակայն վերոնշյալ որոշումը չի պարունակում սպառիչ տեղեկատվություն համայքներում առկա բոլոր փողոցների նշանակության վերաբերյալ:

Փաստորեն ներկայումս բացակայում են օրենսդրական կարգավորումները, որոնք հստակորեն կլուծեն համայնքներում ճանապարհային երթեւեկության պատշաճ ապահովման, միջպետական, հանրապետական եւ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհների եւ դրանց նշանակության վերաբերյալ գործնական խնդիրները:

Այնուհանդերձ, բացի վերը նշված օրենսդրական բացերից, պրակտիկայում առաջանում են խնդիրներ պայմանավորված՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի որոշակիության հետ:

Օրենքի վկայակոչված դրույթը չի պարունակում համայնքում ճանապարհային երթեւեկության արդյունավետ կազմակերպման եւ կառավարման պարտականությունը կրող մարմի մասին հստակ ամրագրում, ինչը խոչնդոտում է համայնքի ղեկավարի լիազորությունների պատշաճ կատարմանը:

3. Կարգավորման նպատակը եւ բնույթը.

««Տեղական իննքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը նպատակ ունի սահմանել համայնքում ճանապարհային երթեւեկության արդյունավետ կազմակերպման եւ կառավարման պարտականության պատասխանատու լիազոր մարմին:

4. Ակնկալվող արդյունքը.

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծով առաջարկվող փոփոխությունով ակնկալվում է առավել արդյունավետ դարձնել այս տիրույթում իրավակիրառ եւ իրավահրացնող խնդիրների լուծումը՝ համայնքում ճանապարհային երթեւեկության արդյունավետ կազմակերպման եւ կառավարման պարտականության պատասխանատու լիազոր մարմնի հստակ սահմանման միջոցով: